

Միայն մի լուսամուտ մնացած էր ,
Յոյնք սկսան փայտեայ մամակալներն
խրբել բիր գործ գնելով՝ մեր միաբա-
նից վերայ յարձակիլ : Երկուստեք բա-
ւականին գանակոծութիւնք եղան, բայց
դժբաղդաբար մեր Արժ. Տեսչի գը-
լուխն սաստիկ վիրաւորեցաւ , եւ
Միւտիրն վերայ հասնելով՝ դադա-
րումն եղաւ կռւոյն :

Շուտով հեռագիրներ հասան ՚ի Ս.
Երուսաղէմ եւ կառավարութեան կող-
մէն Վսեմ. Ասիմ-Պէյն , որ հաղա-
րապետ է եւ թափուր աղասի , իսկ մեր
վանուց կողմէն Արժ. Թարգման Վար-
դան վարդապետն ածապարեցին ՚ի
Բեթլէհէմ : Վսեմ. Ասիմ-Պէյն սկը-
սաւ քննել խնդիրն ամենայն անաչա-
ռութեամբ , քննեց նաեւ երկուստեք
եղած վիրաւորեալներն եւ Յունաց մի-
աբանութիւնն սաստկապէս յանգիմա-
նելէն զինի , քանիցս մեր Տեսչին գի-
մեց եւ յատկապէս խնդրեց , որ հաշ-
տութեամբ վերջ տան խնդրոյն : Բը-
նականաբար մեր Տեսուչն եւ Թարգմա-
նըն սաստիկ ընդգիմացան եւ իրաւունք
պահանջեցին : սակայն Ասիմ-Պէյն եր-
թալով եւ Յունաց Տեսուչն ու միաբա-
նութիւնն ՚ի Սիւնաղարդ Գաւիթն ի-
ջեցնելով եւ ապա վերստին գալով եւ
թախանձելով մեր Թարգմանն եւ Տե-
սուչն միաբաններով հանդերձ իջեցոյց
՚ի նոյն Գաւիթն , ուր արդէն Յոյնք
կըսպասէին : Նստան այն տեղ յառ-
կապէս բերուած աթոռներու վերայ
եւ Վսեմ. Ասիմ-Պէյն սկսաւ սիրոյ եւ
խաղաղութեան յորդորներ կարգալ
երկու կողման , եւ այս յորդորանաց վե-
րայ Հայ եւ Յոյն Տեսուչներն համբու-
րեցին զիրար , իսկ Ասիմ-Պէյն համ-
բուրեց Տեսուչներն , եւ ապա նոյն Սիւ-
նաղարդ Գաւիթն մէջ անոյշ եւ սուրճ
վայելելէն զինի գնացին յիւրաքանչիւր
վանս :

—Հարկ կը համարինք Վսեմ. Ասիմ-
Պէյն ամայս մէջ կատարած մի քանի
գործքերն եւս յիշել : Նախ—Ամայս Տիւ

Կառավարութեան կողմէն ՚ի Յոսպէ
կերթայ եւ իսկոյն որոնելով կը ձերբա-
կալէ այն ոճրագործներն , որոնք սպա-
նած էին տեղւոյն հարիւրապետն եւ
անցայտ եղած :

Երբեք—Բեթլէհէմ գիւղին երկու
թաղեցւոյ մէջ կռիւ կը պատահի եւ
երկուստեք կը վիրաւորին . Վսեմ.
Ասիմ—Պէյն ՚ի Բեթլէհէմ կը հասնի ,
խռովութեան պատճառներն կը հե-
տադոտէ եւ յանցաւորներն ձերբակա-
լելով յերուսաղէմ կը բերէ :

Երբեք—Բեթլէհէմ գիւղին մօտ մի
որսորդ հրացանէն գնտակ արձակելով
անգիտաբար սպանած էր մի մանուկ
իւր մօր զրկին մէջ եւ փախուտ ար-
ւած : Վսեմ. Ասիմ—Պէյն հետադը-
տելով այն որսորդն եւս գտած եւ Կա-
ռավարութեան քննութեանն յանձ-
նած է :

Զորք—Մեր նոր Նախիջեւանցի
ուխտաւորներէն ոմանք դրամահատ-
ներէն անգգալի կերպիւ կը կողոպտուին
քաղաքի մէջ , մի շաբաթէն յետոյ սեղաւ
նաւորաց աչալընթելէ եւ Ասիմ—Պէյն
հետադոտութեամբ գողօնն կը գլու-
նուի , որ մօտ քսան ոսկւոյ չափ գու-
մար էր , եւ գողերն կը ձերբակալուին :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Կ Ր Թ Ա Ր Ա Ն

ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՅ

Գ Ա Ս Է .

Տ Ա Ճ Ա Ր Ի Դ Ա Ր Ե Ր Ը

Գին 60 Ժապ :

ՆՇԻԱՐԻ ՆԱԽՆԵԱՅ

Վ.Ա.ՀՐԱՄԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Բ Ա Ն

Ի ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ԵՒ ՅՕԾՈՒՄՆ

ԼԵՒՈՆԻ Գ. ԱՐԲԱՅԻ ՀԱՅՈՑ

Գին 2 Դաւիթն :